

ԱՄՓՈՓԱԳԻՐ

2017թ.-ի առաջին եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների և բողոքների

2017թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ստացվել է **403** դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել **356** քաղաքացի: Բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **6** քաղաքացի, որից 2-ի խնդրանքը բավարարվել է, 2-ինը՝ մերժվել, 2 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի **17** դիմումից դրական պատասխան է ստացել 16-ը, 1 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետպատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած **11** քաղաքացիներից 7-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 2 դիմում մերժվել է, 2 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է **1** քաղաքացի և ստացել է դրական պատասխան:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են **5** քաղաքացիներ, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմած **5** քաղաքացիներն էլ ստացել են դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են **2** քաղաքացիներ, 2-ն էլ ստացել են դրական պատասխան:

թ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ